

ՄԻՆԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐ

ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՋԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հայկական թեմատիկան ժամանակակից թուրքական գրականության մեջ՝ Օրհան Փամուկ և Էլիֆ Շաֆաք

Սովորող՝ Վերոնիկա Դուրգարյան

Դասարան՝ 11.1

Ղեկավար՝ Աննա Խաչատրյան

Գրախոս՝ Արմեն Ոսկանյան

Երևան 2023-2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Գլուխ 1. Հայկական թեմատիկան XX դարի թուրքական գրականության մեջ
- Գլուխ 2. Հայկական թեմատիկան Օրհան Փամուկի և Էլիֆ Շաֆաքի ստեղծագործություններում
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Քսաներորդ և քսանմեկերորդ դարերի ընթացքում թուրքական գրականությունը մի բնագավառ է, որտեղ մարմնավորվել են պատմական, մշակութային և սոցիալական տարբեր ասպեկտներ: Բարդ պատմական իրադարձությունները, ինչպիսին է 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը, ազդեցին թուրքիայում էթնիկ և սոցիալ-մշակութային հարաբերությունների վերաբերյալ մշակութային համատեքստի ձևավորման վրա:

Հայկական թեման թուրքական գրականության մեջ բարդ և բազմակողմանի ասպեկտ է, որն արտացոլում է թուրքիայի և հայ ժողովրդի պատմական, մշակութային և սոցիալական հարաբերությունները: Այս երկու ժողովուրդների դարավոր փոխհարաբերությունները, ինչպես նաև նրանց ընդհանուր պատմական շրջադարձերը ստեղծեցին հարուստ և բազմազան գրական ֆոն, որի վրա թուրքական ստեղծագործություններում զարգանում էին հայկական թեմաները: Սկսած պատմական իրադարձություններին հղումներից մինչև հայկական ծագում ունեցող մշակութային առանձնահատկությունների և կերպարների նկարագրությունները, հայկական թեմաները թափանցում են թուրքական գրականության տարբեր ժանրեր և ժամանակաշրջաններ: Հայկական թեմաները թուրք գրականության մեջ դրսևորվում են տարբեր ժանրերի և ոճերի միջոցով՝ վեպերից և պատմվածքներից մինչև պոեզիա և դրամա: Գրողները օգտագործում են այս թեման պատմական փաստերին անդրադառնալու, ազգային ինքնությունը քննելու, ողբերգական իրադարձությունները հասկանալու, բարոյական ու փիլիսոփայական մտահոգություններ արտահայտելու համար:

Մենք կքննարկենք թուրքական գրականության մեջ հայկական թեմատիկան, կվերլուծենք, թե հայոց պատմության, մշակույթի և հասարակության որ կողմերն են արտացոլված թուրք գրողների ստեղծագործություններում, ինչպես է այս թեման ընկալվում և մեկնաբանվում տարբեր հեղինակների կողմից, ինչպես նաև ինչ հակասություններ են առաջանում թուրքական գրականության մեջ դրա ներկայացման համատեքստում:

Այս աշխատությունը նպատակ ունի վերլուծել վերջին երկու դարերի ընթացքում թուրքական գրականության մեջ հայկական թեմաների ներկայացվածությունը, բացահայտել դրա դերն ու նշանակությունը գրականության ձևավորման և պատմական իրադարձությունների ընկալման գործում:

Գլուխ 1. Հայկական թեմատիկան XX դարի թուրքական գրականության մեջ

20-րդ դարի թուրքիայի գրականությունն ուսումնասիրել է արգելված թեմաներ, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության (1915-23թթ.), բռնի իսլամացումը, աքսորը և հայերի պայթարը: Այնուամենայնիվ, ժամանակակից թուրքական գրականությունը կրում է ցեղասպանությունը ժխտելու և պատմական փաստերը խեղաթյուրելու նշաններ: Տարբեր թուրքական աշխատություններում այլևայլ կարծիքներ և վերաբերմունք է նկատվում: Գրականության մեջ թուրքականության գաղափարախոսության քարոզիչ գործերը՝ Չիյա Գյոքալփը(1876-1924), Մեհմեդ Էմինը(1869-1944), Հալիդե Էդիփ Ադըվարը(1884-1964), Աքա Գյունդուզը(1886-1958), Օմեր Սեյֆեդդինը(1884-1920), Հայոց ցեղասպանությանը նախորդած և հաջորդած տարիներին իրենց ստեղծագործություններով ատելություն էին սերմանում քրիստոնյա ազգերի հանդեպ և խորացնում ծայրահեղ ազգայնամուլական տրամադրությունը: Այդ ժամանակաշրջանի որոշ թուրք գրողներ ոչ միայն խոսքով և գրչով, այլև գործով իրենց մասնակցությունը բերեցին Հայոց ցեղասպանությանը:

Նման գործունեության մեջ ուշադրության է արժանացել կին գրող Հալիդե Էդիփը, նա ակտիվորեն ներգրավված է եղել Սիրիայում և Լիբանանում որբ հայ երեխաների բռնի իսլամացնելու գործին: Ֆալիհ Ռըֆքը Աթայի վկայություններով՝ վերջինս Սիրիա մեկնող գնացքում Հալիդե Էդիփին ծանոթացրել է երիտթուրք ոճագործ Բեհաեդդին Շաքիրի հետ, ինչից հետո տիկինը հանդիմանել է Ռըֆքին՝ ասելով «Ինձ ստիպեցիր անգիտակցաբար սեղմել մարդասպանի ձեռք»¹: Այնուհանդերձ, նկատենք, որ Հալիդե Էդիփի ստեղծագործությունների մեջ ակնհայտ է այլատյացության դրսևորումներ, իսկ հրապարակախոսական մակերեսային անդրադարձներից և կասկածելի ու ոչ հավաստի հուշերից բացի՝ այս գրողն իր գրականության մեջ չի անդրադարձել Հայոց ցեղասպանության փաստին: Ճատ ուսումնասիրողներ փորձեր են անում ներկայացնել, թե իբր Էդիփը Հայոց ցեղասպանության հարցում ունեցել է օբյեկտիվ և երիտթուրքերին քննադատող տեսակետ, սակայն հենց իրենք բախվում են գրողի հակասականությունների հետ: Կարելի է առանձնացնել Հուլյա Ադաքի գիրքը: Ըստ հեղինակի, Հալիդե Էդիփը մտերիմ և լավ հարաբերություններ է ունեցել երիտթուրքերի հետ: Ադաքն ստիպված էր նաև ներկայացնել, որ 1916-1917թթ. է, որ Էդիփը Ձեմալ փաշայի հրավերով զբաղվել է Սիրիայում և Լիբանանում հայ որբ երեխաների

¹ Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 67.

իսլամացնելու գործով, չնայած, իբրև թե նա դեմ է հայերին իսլամացնելու քաղաքականությանը:² Ինչպես կարող է Չալիդե Էդիփը քննադատել Թալեաթ փաշայի ցեղասպան քաղաքականությունը, Բեհաեդդինին բացահայտ անվանել մարդասպան, իսկ մյուս կողմից համագործակցել Ջեմալ փաշայի հետ: 1909թ. մայիսի 18-ին նա հանդես է եկել հողվածով, որտեղ ներողություն է խնդրում հայերը դիմելով նրանց «Իմ խեղճ հայ քաղաքացիներ»: Սակայն 1919-ից հետո, երբ Էդիփը միանում է քեմալական ազգայնամոլական շարժմանը, նրա տեսակետերը Չայոց ցեղասպանության վերաբերյալ էականորեն փոխվում են : Անրադառնալով Ադանայի կոտորածին՝ այն արդեն որակում է որպես «երկուստեք հարձակումներ»: «Ես այն ժամանակ հայկական հարցն այլ կերպ էի դիտարկում, քան այսօր, ես չգիտեի հայերի կողմից իրականացված կոտորածի մասին և չէի կարող ենթադրել, որ ուրիշները նման հանգամանքների պայմաններում թուրքերից հարյուր անգամ ավելի վատ և դաժան կարող էին վարվել»՝ ասել էր Էդիփը: Զետագայում և՛ գրքերում, և՛ հրապարակախոսական հողվածներում, և՛ ելույթներում Չալիդե Էդիփը լիովին հեռանում է օբյեկտիվության դիրքերից և արդեն բացահայտ կրկնում թուրքական պաշտոնական թեզի դրույթները երկուստեք զոհերի, երկու կողմերի կազմակերպած կոտորածների, «հայկական խռովությունների» մասին ու ըստ Զուլյա ադաքի «հայերի կոտորածի թեմայում հասնում է ժխտողականության»³:

Չակահայկական և ընդհանրապես ոչ թուրքի նկատմամբ ազգայնամոլական, ռասիստական տրամադրություններ արտացոլող ստեղծագործություններ հանդիպում են Չայկական հարցի շուրջ ընթացող զարգացումների ժամանակ: Այդ ուղղվածության հիմնադիրներից կարելի է համարել Օմեր Սեյֆեդդինին, Յաքուբ Քադրի Քարասումանօղլոյի վեպերում:

Չայտնվեցին գրքեր, որտեղ գովերգվում էին ցեղասպանության մեղավորները, իսկ դեպքերը նկարագրվում էին թուրքական պաշտոնական թեզին համապատասխան, գրականության մեջ հաճախացան 1915-ի վերաբերյալ հակահայկական անդրադարձները: Ցածր, ոչ հարգի գործով զբաղվողի դերում առավել հաճախ հանդես են գալիս ոչ թուրքերը, այլ մասնավորապես՝ քրիստոնյաները: Ուշադրության է արժանի և բավական խոսուն է Մուրադ Բելգեի այն դիտարկումը, թե այդ տարիներին թուրք և մուսուլման մարմնավաճառներ, բնականաբար, նույնպես եղել են, սակայն թուրք գրականության մեջ նման կերպարներ բացարձակ չեն հանդիպում: Սոցիալիստ համարող թուրք գրողների լռությունը Չայոց ցեղասպանության վերաբերյալ առնվազն տարօրինակ են, հայկական խնդիրների վերաբերյալ անրադարձներ հանդիպում են հազվադեպ, այն էլ հպանցիկ և հաճախ անուղղակի: Վեդաթ Թուրքալին փորձում է բացատրել գրողների այդ լռությունը հիմնավորելով վերջիններիս անտեղյակությամբ, «Մեր սերունդը չգիտեր, թե ինչ էր, ես անձամբ Չայկական դեպքի մասին մի շարք մանրամասներ ավելի ուշ եմ

² Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016, s. 5.

³ Adak H., նշված աշխ., էջ 74.

իմացել⁴», նա խոստանում է իր նոր գրքում անդրադառնալ հայկական խնդրին և, իրոք, որոշ ժամանակ անց «Կորուսյալ վեպեր» գրքում հանդիպում ենք որոշ անդրադարձների:

Հայերի ցեղասպանությանը մասնակցած, կամ դրան քաջատեղյակ շատ թուրքերի մոտ այդ հիշողությունները ոչ միշտ են բացասական, այլ երբեմն՝ ոգևորիչ: Բերքթայն ասում է, որ ներկայումս էլ Թուրքիայի տարբեր վայրերում կարելի է հանդիպել տների, որտեղ կան պատերից կախված թերթ, որոնց մասին ասում են, թե վրայի արյունը հայկական արյուն է, ընդ որում՝ ոմանք սրանով հպարտանում են, ոմանք՝ ամաչում⁵: Թուրքիայում հայկական հիշողությունները «բաց գաղտնիք են»⁶: Թուրք գրողները առաջ են քաշել անտեղյակության մասին թեզը, նրանք կամ քողարկված ազգայնամոլականներ էին, կամ էլ՝ խուսափողական: Գրողի համարձակությունը նկատել է Բերտոլդ Բրեխտը, համաձայն որի. «Գրողը պետք է ունենա ճշմարտությունն ասելու համարձակություն»⁷:

Հակահայկական թեմատիկային կարելի է հանդիպել մի շարք այլ ստեղծագործություններում, ընդհուպ մինչև բանաստեղծություններում «Կնսատ Իսմայիլը» բանաստեղծությունում հանդիպում ենք հետևյալ տողերին

«Եվ հայերին կոտորելիս մինչև պորտը արյան մեջ թաղվեց»⁸

Նազըմ Հիքմեթի մեկ այլ՝ «Երեկոյան զբոսանք» բանաստեղծության մեջ խոստելով հայ ազգի նպարարավաճառ Կարապետի մասին՝ նշում է.

«Նպարավաճառ Կարապետի լույսերը վառվեցին,
Չներեց այս հայ քաղաքացին
Քրդական լեռներում հոր մորթվելը,
Սակայն սիրում է քեզ,
Քանի որ դու էլ չներեցիր
Այս սև բիծը
Թուրք ժողովրդի ճակատին քսողներին»

Նազըմ Հիքմեթի այլ ստեղծագործություններում տեղ գտավ անթաքույց արհամարանքը, խտրական, անգամ՝ թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նրա հայ կերպարները գերազանցապես հանդես են գալիս որպես բացասական հերոսներ: Անար Ռըզայնը ասել է «Թուրքիայի համար Նազըմ Հիքմեթը միզուցե կոմունիզմի, սոցիալիզմի խորհրդանիշն էր, սակայն

⁴ Türkali V., “Bizim kuşağımız neler oldugunu bilmiyordu”, Agos, 28, 05, 2004, (Հրանտ Դինքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ):

⁵ Bertay H., Nâzım, Ermeni kıyımı, bir kolej hikâyesi, Taraf, 12, 01, 2008

⁶ Խառատյան Յ., Նեյզի Լ., խոստելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Ստամբուլ, 2010, էջ 106:

⁷ Can H., İttihatçı-Kemalist İdeolojiden Kurtulamamış Sosyal Şoven TKP'nin Üyesi Bir Şair: Nazım Hikmet ve Kürtler, İstanbul, 2-inci Baskı, 2010, s. 9.

⁸ Bertay H., նշված հոդ.:

Ադրբեջանի համար Նազըմ Յիքմեթը թյուրքականության խորհրդանիշն էր» շատ փաստեր հիմք են տվել, որպեսզի ներկայումս որոշ ուսումնասիրողներ անրադառնան Նազըմ Յիքմեթի կոմունիստական նկարագրի արտացոլմանը նրա ստեղծագործություններում: 1920 տպագրվել է Նազըմ Յիքմեթի «Քառասուն ավազակների գերին» բանաստեղծությունը, որում գրողը այլաբանորեն խոսում է թուրք ժողովրդի մասին, իսկ ավազակները՝ արևմտյան պետությունները: Հասկանալի էր՝ պատկերված էին Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած դեպքերը՝ Օսմանյան կայսրությունը կործանումը: Սակայն նշելով թուրք ժողովրդին որպես գերի, նա մոռացել էր նշել Օսմանյան Կայսրության քրիստոնյաների մասին, և նրանց տանջանքների մասին::

Ընդհանրապես, նրա պոեզիան հագեցած է կոմունիզմի, անձամբ Վ. Լենինի, խորհրդային Միության գովերգումներով և, այսպես կոչված, «կոմունիստական իդիլիայի» ներկայացմամբ:

Յիքմեթը հայի կերպարները ներկայացնում է բացասական լույսի ներքո: Այսպես, Նազըմ Յիքմեթը «Մարդկային համայնապատկեր» պոեմում, խոսելով Բուրսա քաղաքի բաղնիքների մասին, նշում է, որ այնտեղ է տարել մի հայ աղջկա, և հավելում է. «Խորամանկ է հայ ժողովուրդը, ոչ թե մեր թուրքերի նման»:⁹ Մինևույն ժամանակ հայտնի է Նազըմ Յիքմեթի կապերը հայ գրողների հետ՝ Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սևակ: Նկատելի է նաև նրա հակառակ՝ չեզոք, վերաբերմունքը հայերի հանդեպ, իր հոդվածներում կամ հրապարակախոսության մեջ Նազըմ Յիքմեթը հայերի մասին 1936 թ. «Akşam» թերթում հանդես էր եկել Օրհան Սելիմ կեղծանունով, պոետը հրատարակել է «Պեպո» վերնագրով հոդված, որտեղ խոսում է Գաբրիել Սունդուկյանի, և նրա հայտնի պիեսի ու Ստամբուլում դրա բեմադրման մասին: Հետագայում էլ, արդեն Մոսկվայում հրատարակված հոդվածներից մեկում, խոսում է իր հեղինակած պիեսների մասին՝ անդրադառնալով նաև հայ դրամատուրգներին, դերասաններին, դերասանուհիներին և օսմանյան-թուրքական թատերարվեստի մեջ նրանց ունեցած դերին:

Այնուամենայնիվ, 20-րդ դարի որոշ թուրք գրողների ստեղծագործություններում, տողերի արանքում երբեմն հանդիպում են մտքեր, որոնք վերաբերվում են Հայոց ցեղասպանությանը և օբյեկտիվ են, սակայն հաճախ մակերեսային են ու գերիշխում են խնդրի մասին ակնարկները: Թուրք հայտնի գրող Քեմալ Թահիրը առաջիններից է, ով անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին: Թերևս առաջին անգամ թուրք գրականության մեջ կիրառում է «Հայկական կոտորած» եզրույթը: Թահիրը իր ստեղծագործություններում անդրադառնում է նաև հայկական գուլջի թալանին և նկարագրելով իր գրքում նշում է. «Հայկական կոտորածի մասին հասցրեց: Է՛հ, եղել է մի բան: Եթե չլիներ՝ լավ կլիներ, բայց դե եղել է»¹⁰: Նման անրադարձ ունի նաև Օրհան Քեմալը: Նա իր ստեղծագործություններում երբեմն տեղ է տալիս նաև ոչ թուրք հերոսներին, և հաճախ՝ դրական

⁹ Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 72.

¹⁰ Tahir K., Büyük Mal, İstanbul, 1970, s.161.

երանգներով, չի խուսափել արտահայտվել նաև Հայոց ցեղասպանության և հայերի լքյալ գույքի մասին: «Ընկած կինը» պատմվածքում հերոսուհին դրական երանգներով է հիշում մի հայուհու, ով իրեն՝ անտուն մարմնավաճառին ապաստան է տվել իր տան նկուղում: Հայի էպիզոտիկ պատկերման մի օրինակի ենք հանդիպում «Ամանորյա արկած» պատմվածքում որտեղ գործող անձինք, պատմելով իրենց ցուփ ու շվայտ կյանքը, ինքնագովեստով էին խոսում այն մասին, թե ինչպես են բռնաբարել մի հայ աղջկա¹¹: Հայոց ցեղասպանության և դրանց հետևանքների մասին, ուղղակի և անուղղակի անդրադարձների հանդիպում ենք Օրհան Քեմալի «Արյունոտ հողեր» վեպում: Գիրքը պարունակում է բավական ուշագրավ անդրադարձներ Հայոց ցեղասպանության, հայկական լքյալ գույքի վերաբերյալ: Արդեն գրքի առաջին էջից հանդիպում ենք հետևյալ ձևակերպման «Հայերի խանութների դազգահները, որոնք դատարկվել էրն աքսորից հետո»¹²: Ինչպես նաև հանդիպում ենք մինչև ցեղասպանությունը տարբեր քաղաքներում ապրող հայերի նկարագրությունների, նախկին հայկական տների, գործարանների, դրանց տիրած նոր տերերի մասին: Այսինքն՝ գրքի նկարագրություններում կա որոշակի հայկական ֆոն: Նկարագրելով հայերին նա շեշտը չէր դնում էթնիկ պատկանելության, այլ՝ դասակարգային: Ըստ Օրհանի խոստովանության՝ կարևորը ոչ թե էթնիկ, այլ դասակարգային շահերը, իսկ էթնիկ պատկանելությունը կարևոր չէ¹³:

Յաշար Քեմալ

Հայկական մշակույթի մասին խոսելիս այս հետազոտական աշխատանքում կարևորում ենք անդրադառնալ նաև թուրք գրող Յաշար Քեմալին: Թուրք ականավոր գրող Յաշար Քեմալը հայտնի է իր ստեղծագործություններով, որոնք հաճախ անդրադառնում են պատմական և սոցիալ-մշակութային բարդ թեմաներին: Նրա գրքերում երբեմն նկատելի են հայկական թեմաները, թեև դրանք կարող են չներկայացվել այնքան պարզ, որքան այս խնդրին ամբողջությամբ նվիրված աշխատություններում:

Յաշար Քեմալի ստեղծագործությունները հաճախ նկարագրում են թուրքական պատմությունը, մշակույթը և հասարակությունը տարբեր տեսանկյուններից, ինչպես նաև անդրադառնում են Թուրքիայի էթնիկ և կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի բազմաթիվ ասպեկտներին: Նրա որոշ ստեղծագործություններում կարելի է հանդիպել հայկական ծագում ունեցող կերպարների կամ հիշատակումներ հայ ժողովրդին առնչվող պատմական իրադարձություններին:

¹¹ Kemal O., Ekmek Kavgası, İstanbul, 2013, s. 67.

¹² Kemal O., Kanlı Topraklar, İstanbul, 2012 (10. Basım), s. 10.

¹³ Gültekin M. N., Orhan Kemal'in Romanlarında Modernleşme, Birey ve Gündelik Hayat, İstanbul, 2011, s. 11.

Նա Սիրանուշ Գալշոյանի հետ հարցազրույցի ընթացքում Անդրադառնալով «տարածքների խնդիրն» Քեմալը ասաց, թե Վանում, Էրզրումում, Դիարբեքիրում (Տիգրանակերտ, Ամիդ), Կարսում ապրել են հայեր, թուրքեր և քրդեր: Այնուհետև հարցրեց, թե կա՞նք ապացույց, որ դրանք հայկական են: Գրողը խոսում էր կոտորածից փրկված Հովհաննես ամջայի մասին, բայց և պաշտպանում Թուրքիայի շահերը...

Ինչպես նաև այդ հարցազրույցի շնորհիվ պարզ դարձավ Յաշար Քեմալի տեսակետը Սայաթ-Նովայի վերաբերյալ: Տարօրինակ էր Քեմալի կարծիքը, իր բնորոշմամբ, «Սայաթ-Նովա առեղծվածի» մասին, ըստ նրա... Սայաթ-Նովան քուրդ էր, ով պարզապես լավ տիրապետել էր հայերենին, ադրբեջաներենին, վրացերենին և թուրքերենին...¹⁴

Ինչպես նաև Յաշար Քեմալը Հայաստանի կողմից 2013թ. պարզևատրվել է «Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով՝ հայ ժողովրդի մշակութային ժառանգության նկատմամբ ունեցած խոր հարգանքի, արդարության և գրական վաստակի համար:

Ֆրանսիայում ստանալով «Պատվո Լեգեոն» շքանշանը՝ Քեմալը Թուրքիայում արժանացավ միայն քննադատության: Ֆրանսիայի պարզևներն ընդունելու համար, նրան համարում էին ՀԱՀԳԲ¹⁵-ի աջակից:

Յաշար Քեմալի անվան հետ է կապված Վան քաղաքում գտնվող Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու պահպանումը և կղզու հայկական հետքը, ժառանգությունը: Յաշար Քեմալը պատմում է իր մասին. հանդիպումներ Ալեն Բոսկեի հետ» գրքից «Ակոս» թերթն առանձնացրել է այդ իրադարձության հետ կապված դրվագը:

Յաշար Քեմալը նստեց նավ, նա ընկած էր մտորումների մեջ, անհանգիստանում էր իր ուղղարկած հոդվածների տպագրվելու խնդրով: Տախտակամածին նստած էր բժիշկ, իսկ նրա կողքին՝ «Ձումհուրիյեթ», մոտ քսան օրինակ: Բժիշկը թերթ էր կարդում, երբ Յաշարը պատահաբար նկատեց իր անունը: Ուրախությունը պատեց նրան՝ իմանալով, որ իր բոլոր հոդվածները տպագրվել են: Մշակութային ճաշակ ունեցող կապիտանի հետ կիսվեց իր ուրախությամբ: Կապիտանն ասում է, որ մոտակայքում՝ Ախթամար կղզում, հայերից մնացած ճարտարապետական գլուխգործոց կա, այդ եկեղեցին պետք է քանդեն, առաջարկեց հաջորդ օրը տանել Քեմալին:

Ինչպես և խոսացել էր հաջորդ օրը Կապիտանը եկավ, նրանք սկզբում հանդիպեցին «Ձումհուրիյեթ» Վանի թղթակից՝ Իլյաս Քիթափչըին, նա պատմեց այդ եկեղեցու գլխի գալիքը, ասաց, թե ինչքան ապարդյուն փորձեր է արել, այդ եկեղեցու ավերումը չի կարողանում կանխել: Իլյաս բեյն ասաց. «Նադիրին,

¹⁴ <https://www.grakanter.am/archives/4437>

¹⁵ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ

Նադիրին զանգենք, եթե մեկը կարող է կանգնեցել եկեղեցու ավերումը՝ Նադիր բեյն է»։ Չանգեցին Նադիր բեյին ու ներկայացրին նրանց հուզող հարցը։ Հասնելով Ախթամար կղզի՝ Յաշարը հիացած էր։ Կապիտանը հրամայական տոնով ասաց. «Մինչև ես չասեմ՝ ձեռք չեք տալու եկեղեցուն, ես գնում եմ նահանգապետի մոտ...»։ Աշխատակիցները դադարեցրցին եկեղեցին քանդել կապիտանի միջամտությունից հետո։ Սպասեցին թերթի արձագանքին, և Նադիր բեյի ջանքերով դադարեցվեց եկեղեցու քանդումը։ 1951թ. հունիսի 25-ը Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու փրկության օրն է։

Հայի կերպարի տարբեր երանգների մասին խոսելիս նաև ցանկանում ենք առանձնանացնել այն գրքերը, որը մենք հասցրեցինք կարդալ այս ընթացքում և որից կատարեցինք մեր սեփական եզրահանգումները

Գլուխ 2. Հայկական թեմատիկան Օրհան Փամուկի և Էլիֆ Շաֆաքի ստեղծագործություններում

Օրհան Փամուկ

Օրհան Փամուկը ժամանակակից թուրք գրող է, մի քանի ազգային և միջազգային գրական մրցանակների դափնեկիր, այդ թվում՝ գրականության Նոբելյան մրցանակի (2006 թ.): Հայտնի է ինչպես Թուրքիայում, այնպես էլ արտասահմանում, գրողի ստեղծագործությունները թարգմանվել են ավելի քան հիսուն լեզուներով։ Հայտնի է Հայոց ցեղասպանության և Թուրքիայում քրդերի նկատմամբ խտրականության վերաբերյալ իր քաղաքացիական դիրքորոշմամբ, ինչը չի համընկնում Թուրքիայի պաշտոնական իշխանությունների կարծիքի հետ։¹⁶

Երբ նա պատրաստվում է Ֆրանկֆուրտում ընդունել խաղաղության մրցանակը (Peace Prize of the German)¹⁷, նա Մորին Ֆրիլին ասում է, թե ինչու պետք է կոտրեր իր ազգի ամենամեծ տաբուն։

Թուրքիայում և Արևմուտքում հայտնի գրող՝ Օրհան Փամուկը, կարող էր հայտնվել ճաղերի հետևում Հայոց ցեղասպանության և քրդական հարցի վերաբերյալ իր հայտարարությունների համար։ Փամուկին մեղադրանք առաջադրելու առիթ է հանդիսացել 2005թ. փետրվարին տպագրված շվեյցարական Tages Anzeiger թերթին տված հարցազրույցը։

«Երեսուն հազար քրդեր և մոտ մեկ միլիոն հայեր են սպանվել այս հողերի վրա, և ինձնից բացի ոչ ոք չի համարձակվում խոսել այդ մասին»¹⁸, - ասել է գրողը։ Նրա այս խոսքերը ծայրահեղ բացասական արձագանք են առաջացրել թուրքական քաղաքական, հատկապես ազգայնական շրջանակներում։

¹⁶ <https://www.livelib.ru/author/115176>

¹⁷ <https://www.friedenspreis-des-deutschen-buchhandels.de/en/the-prizewinners/2000-2009/orhan-pamuk>

¹⁸ <https://www.tagesanzeiger.ch/tuerkei-geht-gegen-nobelpreistraeger-vor-789882761884>

Թուրքիան ավանդաբար հերքում է 1915 թվականին շուրջ 1,5 միլիոն հայերի զանգվածային բնաջնջման մեղադրանքները: Պաշտոնական Անկարան նույնպես ցավագին է արձագանքում քրդական հարցի շուրջ Արեւմուտքի քննադատությանը:

Թեև աշխարհի մեծ մասն ընդունում է ցեղասպանությունը որպես պատմական փաստ, թուրքական պաշտոնական գիծն այն է, որ «միայն» մի քանի հարյուր հազար մարդ է զոհվել Առաջին համաշխարհային պատերազմի միջազգային հակամարտությունների ժամանակ: Այլ կերպ առաջարկելը կամ նույնիսկ օգտագործել ցեղասպանություն բառը նշանակում է վիրավորել ազգի հիմնադիր առասպելը և հետևաբար՝ Թուրքիայի պատիվը: Այսպիսով, նրա հարցազրույցի հրապարակման հաջորդ օրը թուրքական մամուլը կատաղի հարձակում գործեց Փամուկի վրա՝ նրան դավաճան անվանելով, մեղադրելով նրան ցեղասպանություն բառը գործնականում անօրինական օգտագործելու մեջ և հրավիրելով «քաղաքացիական հասարակությանը» «լռեցնել» նրան: . Մի քանի մահվան սպառնալիքներից հետո նա թաքնվել է արտասահմանում: Նա վերադարձել է Թուրքիա՝ հուսալով, որ ամեն ինչ ավարտվել է: Ստամբուլի դատախազը նրան մեղադրեց «թուրքական ինքնության հրապարակային նվաստացման» մեջ:¹⁹

Հայկական թեմատիկան «Ձյունը» վեպում:

Ջերոսների, իրադարձությունների և պատմական հղումների միջոցով Փամուկը ամերեսվում է Հայոց ցեղասպանության տաբու թեմային և թուրքական հասարակության վրա դրա մնայուն ազդեցությանը, լույս սփռելով կոլեկտիվ ամենգիայի և ժխտման վրա, որոնք պատել են պատմության այս մուկ գլուխը: Հայաստանն այս գրքում կարևոր տեղ է գրավում՝ ոչ միայն որպես երկիր, այլև որպես խորհրդանշական փոխաբերություն՝ արտացոլելով հեղինակի շոշափած բազմաթիվ թեմաներն ու գաղափարները:

Հայկական մշակույթը և պատմությունը. Թեև վեպի ժամանակակից իրականությունը տեղի է ունենում Կարսում՝ Թուրքիայի մի քաղաքում, որը նախկինում եղել է Հայաստանի մաս, «Ձյուն»-ի Հայաստանը հիշեցնում է այս երկրի հարուստ պատմությունն ու մշակույթը: Փամուկը նկարագրում է հայկական եկեղեցիները, մշակութային առանձնահատկությունները և պատմական իրադարձությունները՝ ընդգծելու մշակութային ժառանգության և հիշողության պահպանման կարևորությունը:

«Եղել են նաև մարդիկ, ովքեր այստեղ ապրել են Հայկական պետության ժամանակներից, և նրանց՝ դեռ հազար տարի առաջ կառուցած վանքերից մի քանիսն իրենց ողջ հրաշագեղությամբ կանգուն են առ այսօր»: «...և ավերած եկեղեցու դուռը զտնվում է պատմության թանգարանում, ուր կա նաև հատուկ բաժին՝ նվիրված հայկական կոտորածներին»²⁰: Հայկական մշակույթի,

¹⁹ <https://www.theguardian.com/world/2005/oct/23/books.turkey>

²⁰ Օրինակ Փամուկ «Ձյուն»-ը, էջ 32, գլուխ 3՝ «Աղփտությունը և պատմությունը»

պատմության և ավանդույթների նկարագրության միջոցով հեղինակը բացահայտում է այս երկրի մշակութային ժառանգության հարստությունը: «Բոլորը՝ հայերը, օսմանները, ռուսները իրենց մշակույթի համեստ նրբերանգն են գրել քաղաքի դիմագծում և աննկատ հեռացել»²¹

Կարոտ և կորուստ. Ձյան մեջ Փամուկն ուսումնասիրում է կարոտի և կորստի թեման հայոց պատմության ոսպնյակի միջոցով: Հայաստանը հայտնվում է որպես կորցրած տան, կորցրած ավանդույթների և կորցրած ինքնության խորհրդանիշ: Այս թեման միահյուսված է ձյան մոտիվով, որը խորհրդանշում է ժամանակի և մշակութային հիշողության սառեցված պատմական իրադարձությունները: «Քանի դեռ ոստիկանական մեքենան ընթանում էր Կարսի ձյունածածկ ու խավար փողոցներով, նրանք նայում էին նախկինում հայերին պատկանած առանձնատների պատուհանների վարագույրների ճեղքերից երևացող գուևատ, դեղնավուն լույսերին, պոլիէթիլենի տոպրակները ձեռքերին սառցակալած փողոցներում դեգերող ծերունիներին, ուրվականների նման միայնակ , լքված ու անբնակ հնամյա տների ճակատներին»²²: «Անի ուրվական քաղաքը, որն այդպիսին էր դարձել հայկական թագավորության անկումից հետո , հիշատակվում է նաև ամայի, սարսափելի ու անկրկնելի քաղաքների մասին, որոնք տեսնում էր երազներում»²³

Ինքնություն և պատկանելություն. Հայ կերպարների հետ հանդիպումները, նրանց մասին որոշ տեղեկությունները, հավելումները նույնպես իրենց տեղն ունեն այս վեպում, շատ կարևոր է ուշադրություն դարձնել, որ հայերի հանդեպ վերաբերմունքը մեծամասամբ դրական էր: «Մի գնդակ հսկա անցք էր բացել այդ մասնավոր օթյակի հատակին, որը 1900թթ. զբաղեցնում էր կաշվեղենի մեծահարուստ հայ վաճառական Գրիգոր ճգմալյանը, երբ մորթե զգեստներով պճնված ընտանիքի անդամների հետ այցելում էր թատրոն»²⁴,

«Այն \$այք Բեյի պողոտայում էր, ուր գտնվում էին հարուստ ռուսներից և հայերից մնացած հնամյա քարակերտ զենքեր, որոնք ներկայումս մեծ մասամբ օգտագործվում էին վարչական նպատակներով»²⁵

Ընդհանուր առմամբ, Հայաստանին վերաբերող թեմաները ձյան մեջ օգնում են ավելի խորը պատկերացումներով բացահայտել կորստի, ինքնության, քաղաքական լարվածության և մշակութային ժառանգության նշանակության մասին: Հայաստանը դառնում է ոչ միայն միջավայր, այլև կարևոր խորհրդանիշ, որի միջոցով հեղինակը ուսումնասիրում է մարդկային փորձառության և ժամանակակից հասարակության բարդ կողմերը:

²¹ Օրինակ Փամուկ «Ձյուն»-ը, 2002թ. էջ 128, գլուխ 15՝ «Ազգային թատրոնում»

²² նույն գրքից . էջ 66, գլուխ 7՝ «Կուսակցության բաժանմունքում, անվտանգության վարչությունում և դարձյալ փողոցում»

²³ նույն գրքից, էջ 174, գլուխ 21՝ «Կան սառն եւ գարնուրելի սենյակում»

²⁴ նույն գրքից, էջ 152, գլուխ 18՝ «Հեղափոխության թատերաբեմ»

²⁵ նույն գրքից, էջ 17, գլուխ 2՝ «Հեռավոր թաղամասերը »

ԷԼԻՖ ՇԱՖԱՔ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ՔԻՃՐ»

Էլիֆ Շաֆաքի այս վեպը Թուրքիայում լուրջ քննադատության ենթարկվեց, գրողը մեղադրվում էր թուրք ժողովրդի, թրքության հանդեպ վիրավորանքի, ցեղասպանություն կատարելու մեջ: Ըստ դատարանի՝ այդ վեպը պատճառ է դարձել թուրք ժողովրդի հանդեպ այլ ազգերի ատելությանը լցված վերաբերմունքը: Գրողը անդրադառնում է տաբու թեմային՝ Հայոց ցեղասպանությանը:

Դատը տեղի չունեցավ՝ բավականաչափ ապացույց չլինելու պատճառով գրողը նշել է իրական գրքի նպատակը՝ թուրքերի և հայերի միջև խաղաղություն հաստատելը: Էլիֆ Շաֆաքը նաև ասել էր, թե կարծես դատ բացված լիներ գրքի հերոսների, այլ ոչ թե նրա դեմ:

Չնայած բազմաթիվ խնդիրների՝ գիրքը տպագրվում է նաև Թուրքիայում գրքի հանրաճանաչությանը նպաստեց նաև վեպի շուրջ ստեղծված քաղաքականացված աղմուկը: Հիմնվելով այդ կետերին՝ գրքին հնարավորություն չտրվեց ներկայանալ իր թեմաների լայնածավալ ընդգրկումով:

Հայոց Ցեղասպանությունն ու տեղահանությունն

Հայոց ցեղասպանությունը կենտրոնական թեմա չէ, սակայն դրա ազդեցությունը հայ հասարակության և ազգային ինքնության վրա կարևոր է: Հեղինակը այս թեման դնում է Ստամբուլ քաղաքի պատմական և սոցիալական միջավայրի համատեքստում՝ ստեղծելով տարբեր էթնիկ խմբերի միջև բարդ հարաբերությունների ավելի լայն պատկեր:

«Հայրս Բարսամ Չաքմաքչյանն է, մեծ քեռուս անունը Տիգրան Խստանբուլյան էր, նրա հայրը՝ Երվանդ Խստամբուլյան, իմ անունը Արմանուշ Չաքմաքչյան է ամբողջ տոհմի Եսինչ Եսինչյան... Ամբողջ ընտանիքը 1915թ. մսագործ թուրքեր ձեռքով կորցրած, ցեղասպանությունից մազապուրծ տոհմի թոռն եմ, սակայն Մուսթաֆա անունով թուրք է ինձ մեծացրել, այդ պատճառով էլ սովորեցի իմ արմատներին դավաճանելը, մեծացա որ ժխտեմ հայոց

ցեղասպանությունը: Անեկդոտ է, Աստված վկա... վա՛յ, մեռնեմ պրծնեմ »²⁶

«Վե՛ր կաց, արի Միջին Ասիայով մինչև Անատոլիայի խորքերը, հետո շուրջը նայիր: Լա՛վ, անտեղի նստակյաց միլիոնավոր հայերին ի՞նչ եղավ: Ձուկվեցին: Ոչնչացան: Սպանվեցին: Որբ մնացին: Վտարվեցին: Չրկվեցին ունեցվածքից: Իսկ հետո մոռացվեցին: »²⁷:

Մշակույթ

Էլիֆ Շաֆաքի վեպում ուշադրություն է դարձվում նաև հայկական մշակույթի այլ կողմերին, ինչպիսիք են ավանդույթները, սովորույթները, լեզուն և խոհանոցը: Հայկական մշակույթի նկարագրության միջոցով հեղինակը

²⁶ Էլիֆ Շաֆաք «Ստամբուլի բիճը» Երևան 2007թ., Գլուխ 3, էջ 65

²⁷ Նույն Գրքից, Գլուխ 3, էջ 67

փորձում է ցույց տալ նրա հարստությունը, բազմազանությունն ու կարևորությունը Թուրքիայի պատմության և մշակութային ժառանգության համատեքստում: «ուտելուց հետո նվագելու համար պահարանից հանկարծ երկու ձայնասկավառակերը(Կոմիտաս. Ավանդական երգեր և Երևանի կանանց երգչախմբի կատարմամբ հայկական երաժշտություն), տեսանվագարկիչի մեջ կիսատ դիտված տեսանկյունը («Նռան գույնը») մի քանի նկար, Սուրբ Աննայի սրբապատկերը, Ջայաստանի քարտեզը, ճերմակ ձյունով ծածկված Արարատի պատկերը...»²⁸, «Նրա կողքին տարբեր չափերի գույնզգույն կավե ամանների մեջ՝ լոբու փիլաքի, քաղընբուդու քյուֆթա, գարնիյարաք, փռից Նոր հանած գաթա և ամենակարևորը, ա՛խ, ամենագրավիչը, բաստուրմա»:²⁹ Ինչպես նաև խոսվում է հանրահայտ հայկական ռոք խմբի՝ System Of a Down-ի մասին«-Ասա տեսնեմ, ճի՞շտ է, որ «System Of a Down»-ը մեզ ատում է:.... Ես շատ սիրելի ռոք խումբ ունեմ: Երաժիշտներն էլ հայ են: Դե լեգենդներ են պտտվում, որ նրանք ատում են թուրքերին, չեն ուզում՝ որևէ թուրք իրենց երաժշտությունը լսի»³⁰:

Ինքնություն և պատկանելություն

Ճաֆակը ուսումնասիրում է ինքնության և պատկանելության բազմաթիվ կողմերը տարբեր կերպարների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը բախվում է իր ներքին հակամարտություններին՝ կապված ինքնորոշման և հասարակության մեջ իրենց տեղի հետ:Առանձին անդրադարձում է հայերին՝ նշելով նրանց տեղը հասարակության մեջ: Օրինակ՝ թեստ, ուղղարկված նամակի մեջ «Արդյո՞ք բականաչափ հայ եք»: «Ջայ»- բառը Կաֆե կունդերայում ոչ ոքի չգարմացրեց, բայց «ամերիկահայ»-ն այլ էր: «Թուրքահայ» նշանակում է մերոնքական լինել, լրիվ հայ լինելն էլ խնդիր չէ, լրիվ թուրք լինելն էլ է նման մի բան՝ նույն մշակութային, նույն խմորից, նույն կտորից լինել: Բայց «ամերիկահայ» լինելը նշանակում էր սփյուռքում ուղեղի լվացում անցած լինել և ատել թուրքերին: »³¹

Տարբերություններ

Էլիֆ Ճաֆաքի «Ստամբուլի բիճ»-ը և Օրհան Փամուկի «Ձյունը» ժամանակակից թուրքական գրականության երկու նշանավոր գործեր են, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է ուրույն հեռանկար թուրքական հասարակության և նրա մշակութային ժառանգության վերաբերյալ: Թեև երկու գրքերն էլ նկարագրում են թուրքական մշակույթը և սոցիալական իրողությունները, դրանք զգալիորեն տարբերվում են իրենց ոճով, թեմաներով և կերպարների և սյուժեի ներկայացման մոտեցմամբ:

²⁸ Նույն գրքից, գլուխ 3, էջ 69

²⁹ Նույն գրքից, գլուխ 3, էջ 62

³⁰ Նույն գրքից, գլուխ 8, էջ 177

³¹ Նույն գրքից, գլուխ10, էջ 230

«Ստամբուլի բիճ» գրքում Էլիֆ Շաֆաքը կենտրոնանում է թուրքական հասարակության բազմազանության վրա՝ տարբեր կերպարների կյանքի պատմությունների ուսանյակի միջոցով, ներառյալ հայկական ժառանգությունը, սեռական ինքնությունը, ընտանեկան կապերը և կրոնական համոզմունքները: Չեղինակը գրում է տարբեր տեսանկյուններից, այդ թվում՝ տղամարդկանց ու կանանց, ավագ ու երիտասարդ սերունդների տեսանկյուններից՝ ստեղծելով Ստամբուլի կյանքի պատկերը՝ լի հակադրություններով ու հակասություններով:

Մյուս կողմից, Օրհան Փամուկի «Ձյունը» ավելի առեղծվածային ու փիլիսոփայական ստեղծագործություն է, որը հիմնված է Կարս փոքրիկ քաղաքում ձնաբքի ժամանակ տեղի ունեցող իրադարձությունների վրա: Փամուկն ուսումնասիրում է թուրքական ինքնության, կրոնական և քաղաքական համոզմունքների, ինչպես նաև արևելյան և արևմտյան աշխարհների հարաբերությունների բարդ հարցերը: Նա ստեղծում է առեղծվածի ու անորոշության մթնոլորտ, որտեղ տարօրինակ ու անսպասելի իրադարձություններ են տեղի ունենում:

Երկու գրքերն էլ՝ Էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիճը» և Օրհան Փամուկի «Ձյունը», ներկայացնում են թուրքական գրականության հայկական թեմաների հետաքրքիր և տարբեր մոտեցումներ:

Էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիճը» վեպում հայկական թեմաներն առկա են հայկական ժառանգությանն ու պատմությանը առնչվող հերոսների կյանքով: Վեպն անդրադառնում է Օսմանյան կայսրությունում Չայոց ցեղասպանության թեմային, թեև ոչ որպես կենտրոնական կետ, այլ որպես թուրքական պատմության և մշակույթի ավելի լայն համատեքստի մաս: Այս թեման օգնում է կերտել ժամանակակից հասարակության պատկերը, որը տառապում է անցյալի վնասվածքներից և փնտրում է իր ինքնությունը Ստամբուլի բազմազգ և բազմամշակութային պայմաններում:

Օրհան Փամուկի «Ձյուն»-ում առկա են նաև հայկական թեմաները, թեև ավելի քիչ արտահայտված ձևով: Կարս քաղաքը, որտեղ տեղի է ունենում վեպի սյուժեն, ունի զգալի թվով հայեր, և նրանց ներկայությունն ազդում է քաղաքի հասարակական կյանքի վրա: Չայ կերպարները հանդիպում են պատմության ողջ ընթացքում և նպաստում սյուժեի զարգացմանը, ինչպես նաև արտացոլում են թուրքիայի այս տարածաշրջանի տարբեր էթնիկ և կրոնական խմբերի միջև բարդ հարաբերությունները:

Այսպիսով, երկու գրքերն էլ հետաքրքիր և խորաթափանց մտքեր են առաջարկում թուրքական հասարակության և նրա մշակութային ժառանգության վրա հայկական թեմաների դերի և ազդեցության վերաբերյալ:

Այսօր մեզ համար էլ հարց է, թե ինչու Հայաստանի Հանրապետությունը չի պարզևատրում Օրհան Փամուկին կամ Էլիֆ Շաֆաքին, որոնք իրենց գործերում ընդգծված տեղ են տալիս հայերի 1915թ. կորուստներին ու ցավերին, որը մինչ օրս մնում է հայի հոգեբանության անբաժան մաս, քանի դեռ թուրքերի կողմից ոչ մի քայլ չի արվում ընդունելու և ճանաչելու Ցեղասպանությունը:

Եզրակացություն

Վերջապես, մեր ուսումնասիրությունը ընդգծում է թուրքական գրականության մեջ հայկական թեմաների հետագա ուսումնասիրության կարևորությունը՝ տարածաշրջանի մշակութային ժառանգության և ժամանակակից գրական ասպարեզում դրա ազդեցության մասին մեր գիտելիքները ընդլայնելու համար: Այս թեմայի ավելի խորը ըմբռնումը կարող է օգնել հաղթահարել կողմնակալությունն ու կոնֆլիկտը և օգնել ստեղծել ավելի ներդաշնակ հասարակություն:

20-րդ և 21-րդ դարերի թուրքական գրականության հայկական թեմաների վերաբերյալ այս աշխատության ավարտին պետք է ընդգծել այս երևույթի ուսումնասիրության կարևորությունը հայերի և թուրք հասարակության միջև պատմական, մշակութային և սոցիալական բարդ հարաբերությունները հասկանալու համար: Վերլուծելով հայկական թեմաները շոշափող գրական ստեղծագործությունները՝ մենք կարող ենք հետևել թուրք գրողների հայացքների Էվոլյուցիային հայ ժողովրդին առնչվող պատմական իրադարձությունների և ժամանակակից գրականության մեջ դրանց արտացոլմանը:

Հիմնական բացահայտումներից մեկն այն է, որ թուրքական գրականության մեջ հայկական թեմաներին ավելի բաց են անդրադառնում և լուսաբանվում են տարբեր տեսանկյուններից, ներառյալ պատմական փաստերը, կերպարների փորձառությունները և բարոյական և էթիկական երկընտրանքները: Սա վկայում է տալու թեմաներից աստիճանաբար հեռացման և հայ և թուրք ժողովուրդների միջև հարաբերությունների բարդ ասպեկտների քննարկման հարցում բաց լինելու մասին:

Կարևոր է նաև նշել, որ գրականության միջոցով որոշ թուրք գրողներ ձգտում են վերականգնել կորցրած պատմական հիշողությունը և արդարությունը հայ ժողովրդի նկատմամբ: Սա ոչ միայն թույլ է տալիս մեզ լույս սփռել անցյալի վրա, այլև նպաստում է վերքերի բուժման գործընթացին:

Չնայած այն հանգամանքին, որ Հայկական հարցի թեման շարունակում է մնալ կարևոր և զգայուն հարց թուրքական գրականության մեջ, դրա ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս ոչ միայն

ընդլայնել գիտելիքները այս երկրի գրական ժառանգության մասին, այլև ավելի լավ հասկանալ գործընթացներն ու միտումները, որոնք որոշում է ժամանակակից հասարակությունը և նրա հարաբերությունները հարևանների և պատմական թշնամիների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 67.
2. Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016, s. 5.
3. Adak H., Աշված աշխ., էջ 74.
4. Türkali V., “Bizim kuşağımız neler oldugunu bilmiyordu”, Agos, 28, 05, 2004, (Հրատարակչի հետքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ):
5. Berktaş H., Nâzım, Ermeni kıyımı, bir kolej hikâyesi, Taraf, 12, 01, 2008
6. Խառատյան Յ., Նեյզի Լ., Խոսելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Ստամբուլ, 2010, էջ 106:
7. Can H., İttihatçı-Kemalist İdeolojiden Kurtulamamış Sosyal Şoven TKP'nin Üyesi Bir Şair: Nazım Hikmet ve Kürtler, İstanbul, 2-inci Baskı, 2010, s. 9.
8. Berktaş H., Աշված հող.:
9. Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 72.
10. Tahir K., Büyük Mal, İstanbul, 1970, s.161.
11. Kemal O., Ekmek Kavgası, İstanbul, 2013, s. 67.
12. Kemal O., Kanlı Topraklar, İstanbul, 2012 (10. Basım), s. 10.
13. Gültekin M. N., Orhan Kemal'in Romanlarında Modernleşme, Birey ve Gündelik Hayat, İstanbul, 2011, s. 11.
14. <https://www.grakantert.am/archives/4437>
15. Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ
16. <https://www.livelib.ru/author/115176>
17. <https://www.friedenspreis-des-deutschen-buchhandels.de/en/the-prizewinners/2000-2009/orhan-pamuk>
18. <https://www.tagesanzeiger.ch/tuerkei-geht-gegen-nobelpreistraeger-vor-789882761884>
19. <https://www.theguardian.com/world/2005/oct/23/books.turkey>
20. Օրհան Փամուք «Զյուն»-ը, էջ 32, գլուխ 3՝ «Արհատությունը և պատմությունը»
21. Օրհան Փամուք «Զյուն»-ը, 2002թ. էջ 128, գլուխ 15՝ «Ազգային թատրոնում»
22. Նույն գրքից . էջ 66, գլուխ 7՝ «Կուսակցության բաժանմունքում, անվտանգության վարչությունում և քարվաղ փողոցում»
23. նույն գրքից, էջ 174, գլուխ 21՝ «Կան սառն եւ գարիտը ելի սենյակում»
24. նույն գրքից, էջ 152, գլուխ 18՝ «Հեղափոխության թատերաբեմ»
25. նույն գրքից, էջ 17, գլուխ 2՝ «Հեռավոր թաղամասերը »
26. Էլիֆ Շաֆաք «Ստամբուլի բիճը» Երևան 2007թ., Գլուխ 3, էջ 65
27. նույն գրքից, Գլուխ 3, էջ 67
28. նույն գրքից, գլուխ 3. էջ 69
29. նույն գրքից, գլուխ 3, էջ 62
30. նույն գրքից, գլուխ 8, էջ 177
31. նույն գրքից, գլուխ 10, էջ 230

